ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Գալուստ Սահակյանի, Կարինե Աճեմյանի և Էդուարդ Շարմազանովի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ (Պ-295-03.07.2013-ՊԻ-010/0) սկզբունքային առարկություններ չունի:

Միաժամանակ առաջարկում ենք օրենքի նախագծի 2-րդ հոդվածը «մասին» բառից հետո լրացնել «՝ նոր դատական ակտին համապատասխան» բառերով՝ նկատի ունենալով նշված օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրվում է օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատականը:

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

01.08.2013 ket 1

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

««Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

««Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենքի) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը՝ ընդունվելու կամ չընդունվելու դեպքում, ՀՀ պետական և համայնքների բյուջեների մուտքերի և ելքերի, ինչպես նաև բյուջետային բնագավառում քաղաքականության փոփոխմանը չի հանգեցնում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա նախատեսվում է ***դրական ազդեցություն***՝ հաշվի առնելով հետևյալը.

- *Նախագծով ամրագրվում է հարգելի պատճառներով կատարողական թերթի կատարման ներկայացնելու ժամկետը բաց թողնելու դեպքում այն դատարանի կողմից վերականգնելու պարտադիր պահանջ, որը վերաբերում է նաև իրավաբանական անձանց,*
- Նախագծով սահմանվում է հօգուտ քաղաքացիական հայցվորների դատական ակտի կատարման շրջադարձի հնարավորություն՝ վերացնելով օրենսդրության մեջ առկա անհամապատասխանությունները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) նախատեսվում է վերականգնել կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը, ինչպես նաև փոփոխվում է վճռի կատարման շրջադարձը:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն.**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն:**

ՆԱԽԱԳԻԾ

Պ-295-03.07.2013-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության 1998թ. մայիսի 5-ի ՀՕ-221 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 24-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«Պահանջատիրոջ կողմից կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը հարգելի ճանաչված պատճառներով բաց թողնելու դեպքում դատարանը վերականգնում է այն»:

Հոդված 2. Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր՝ 2-րդ պարբերությամբ հետեւյալ բովանդակությամբ.

«Եթե ի կատար ածված եւ հետագայում բեկանված դատական ակտն անհրաժեշտություն է առաջացնում շահագրգիռ կողմին վերադարձնելու բեկանված դատական ակտին համապատասխան կատարվածը, ապա դատարանը կայացնում է դատական ակտ՝ գույքը շահագրգիռ կողմին վերադարձնելու մասին»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածում կատարվող լրացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ սահմանադրական դատարանի 2011 թվականի հուլիսի 12-ի ՍԴՈ-983 որոշման եւ 2013 թվականի հունիսի 28-ի ՍԴՈ-1102 որոշման պահանջների կատարմամբ: Նախագծի ընդունումը նպատակ է հետապնդում պաշտպանելու քրեական գործով տուժողների եւ միաժամանակ որպես քաղաքացիական հայցվոր հանդես եկող անձանց իրավունքները, որոնց պատկանող եւ քրեական գործով իրեղեն ապացույց ճանաչված գույքը հակասահմանադրական մեկնաբանությամբ նորմ կիրառած (խոսքը վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասին) դատական ակտի հիման վրա բռնագրավվել է հոգուտ պետության՝ որպես հանցավոր ճանապարհով ստացված գույք:

Խնդիրը կայանում է նրանում, որ ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-983 որոշմամբ ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 5-րդ մասի եւ 31-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին հակասող եւ անվավեր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի՝ «Այդ գույքը ենթակա է բռնագրավման՝ անկախ դատապարտյալի կամ որեւէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրա կողմից տիրապետելու հանգամանքից» դրույթը՝ իրավակիրառական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ՝ այն մասով, որ բռնագրավումից հետո չի երաշխավորում տուժողի/ օրինական տիրապետողի/ գույքային շահերի եւ սեփականության իրավունքի անհրաժեշտ պաշտպանություն: ՀՀ սահմանադրական դատարանի հիշյալ որոշումից հետո անհրաժեշտություն է առաջացել քրեական գործով իրեղեն ապացույց ճանաչված գույքը վերադարձնել սեփականատերերին՝ քրեական գործով տուժողներին: Քանի որ դատական ակտի հիման վրա իրեղեն ապացույցները՝ որպես հանցավոր ճանապարհով ստացված գույք, արդեն բռնագրավվել էին հոգուտ պետության, ուստի տուժողների իրավունքների լիարժեք պաշտպանությունը անհրաժեշտություն է առաջացրել կատարել դատական ակտի կատարման շրջադարձ՝ պետությունից հոգուտ տուժողների կամ քաղաքացիական հայցվորների: Սակայն «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով բացակայում է հոգուտ քաղաքացիական հայցվորների դատական ակտի կատարման շրջադարձի հնարավորությունը, իսկ ներկայումս հիշյալ օրենքով նախատեսված դատական ակտի կատարման շրջադարձը ուղղված է միայն պարտապանի շահերի պաշտպանությանը եւ կիրառվում է այն դեպքում, երբ ի կատար ածված վճիռը բեկանվել եւ կայացվել է հայցը լրիվ կամ մասնակի մերժելու մասին նոր վճիռ, կամ գործի վարույթը կարճվել է, կամ հայցը թողնվել է առանց քննության: Թեեւ ՀՀ սահմանադրական դատարանը իր 2013 թվականի հունիսի 28-ի ՍԴՈ-1102 որոշմամբ սահմանադրական է ճանաչել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասը, այդուհանդերձ առաջացած խնդիրը, առանց համապատասխան լրացման, կմնա չկարգավորված:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածում առաջարկվող փոփոխությունը կապված է ՀՀ սահմանադրական դատարանում 2013թ. սեպտեմբերի 24-ին քննվելիք գործի հետ, եւ նպատակ ունի վերացնելու քաղաքացի եւ իրավաբանական անձ, ինչպես նաեւ օրենքով նախատեսված մյուս պահանջատերերի միջեւ առկա անհավասարությունը՝ կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը հարգելի ճանաչված պատճառներով բաց թողնելու դեպքում այն վերականգնելու հարցում: Նման իրավակարգավորման պայմաններում խախտվում է իրավաբանական անձի՝ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով նախատեսված դատական պաշտպանության իրավունքը, քանի որ դատական ակտերի հարկադիր կատարումը դատական պաշտպանության իրավունքի բաղկացուցիչ մասն է կազմում: Մասնավորապես՝ Օրենքը կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը հարգելի ճանաչված պատճառներով բաց թողնելու դեպքում այն վերականգնելու խնդրով դատարան դիմելու հնարավորություն տալիս է միայն քաղաքացի պահանջատիրոջը, մինչդեռ Օրենքով պահանջատեր կարող է հանդես գալ նաեւ իրավաբանական անձը, Հայաստանի Հանրապետությունը, համայնքը եւ օտարերկրյա պետությունը, որի օգտին կամ ի շահ որի տրվել է կատարողական թերթը: